



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
781

1999

ՀՈՒՍԱՒՈՐԶԱԿՐՕՆ ՀԱՅՈՒ ՄԸ

ՈՒՂԻՂ

ԳԼՏՈՂ ՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՀՈՒՎՄԱՅ ՊԻՈՍ Թ. ՊԱՊԻՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍԻ ՀԱՅԱԶԳԻ ՊԱՊԱԿԱՆՆԵՐՈՒՆ



N=252

281.6 : 282

ԶՄԻՒՌՆԻԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՎՐԱՐԵ ՏԵՑԵԵԱՆ

— 1854 —



UNIVERSITY OF ALABAMA

LIBRARY

LIBRARY OF THE UNIVERSITY OF ALABAMA

LIBRARY OF THE UNIVERSITY OF ALABAMA

LIBRARY OF THE UNIVERSITY OF ALABAMA



LIBRARY OF THE UNIVERSITY OF ALABAMA

LIBRARY OF THE UNIVERSITY OF ALABAMA

—1851—

781-60

3p 783

ԼՈՒՍԱՒՈՐԶԱԿՐՕՆ ՀԱՅՈՒ ՄԸ
ՈՒՂԻՂ ԴԵՏՈՂ ՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հ Ռ Ո Մ Ա Յ Պ Ի Ո Ս Թ Պ Ա Պ Ի Ն
ԿՈՍՏԱՆՉՆՈՒՊՕԼՍԻ ՀԱՅԱԶԳԻ ՊԱՊԱԿԱՆՆԵՐՈՒՆ
ՈՒՂԱԾ ԿՈՆՏԱԿՒՆ ՉՐԱՅ

Եթէ անկեղծութեամբ խօսիլն ոչ միայն ներեւի է ամէն քաղաքացւոց ոյլև պարտք նուիրական, ուրեմն թող ինծի ալ թոյլ տրուի իմ զգացմունքս իմ կրօնակից եղբարցս անկեղծութիւն հաղորդել և Հռոմայ Պփոս Թ. եպիսկոպոսին նոր կոնդակին քանի մը կտորներուն վրայ խօսիլ: Հռովմ 600 տարիէն աւելի Եւրոպայոց պապականներէն կասկածելով և թերևս յուսա հատած՝ իւր սեակիր արքանեակներու միջոցաւ քաղմադ իմի հնարքներով ջանացաւ արեւելեան հաւատացելոց մէջ իրեն ապաստանարան մը պարտատելու, որպէս զի Եւրոպայէն արքորուած ժամանակը կարող ըլլայ քանի մը դար ալ այն գործակեացը վրայ թագաւորելու: Այժմեան Հռոմովմը առջի դարերու Հռովմն չէ և ընդունայն կ'ըլլար մեր վաստակը եթէ փնտռելու ելլէինք անոր մէջը նախնի հովուաց հեղութիւնն, խոնարհութիւնն, աւետարանական հաւատոց պարզութիւնն և կենցաղավարութեան մաքրութիւն, որոնք դեռ մինչև իններորդ դարն, մինչդեռ քրիստոնէական միաբանուէ մէջ կը գտնուէր, շատ կամ քիչ կրճաղկէին և հաւատացելոց շինուէ և փրկուէ պտուղներ կը մատուցանէին: սակայն այն ողբոց արժանի դարէն սկսեալ, երբոր հերձաւ Հռոմ քրիստոնէից միաբանութենէն և աւետարանի խոնարհութեան, աղքատութեան և

հեղու թեան հոգին մերկացաւ, ամենայն բարե-
 կարգութիւններն անոր մէջ կերպարանափոխ
 եղան և սրբոց Հարց Ակեղեցւոյ կանոններն և
 կարգերն տակնու վրայ կործանեցան, այնպէս որ
 այսօրուան Հռովմայ եպիսկոպոսն իրօք Պիրման-
 ներու կամ Ղափանի թագաւորէն ամենեւին տար-
 բերութիւն չունի. մի և նոյն զինաւորութիւն,
 մի և նոյն թնդանօթք և հրացանք, մի և նոյն
 ատեանք մահապարտութեան. և որ այսօր 'ի
 թղթին առ Աոստանդնուպօլսի պապականս զին-
 քըն Հայր հաւատացելոց և փոխանորդ Պետրո-
 սի առաքելապետին կ'անուանէ՝ 'ի Հռովմ բազ-
 մեալ յաթոռն ժանտից, որպէս երբեմն Աննա
 և Այիափա, ամէն օր իւր հոգեւոր որդւոցը դառն
 աքսորման, մշտնջենաւոր բանտարգելութեան,
 սուղանաց և մահուան վճիռներ կու տայ: Հռով-
 մայ եպիսկոպոսն, Աիկիոյ տիեզերական ժողովոյ
 Զ, կանոնին հակառակ, որ իւրաքսանչիւր պատ-
 ըխարքի հրաման կու տայ իր թեմին մէջն միայն իշ-
 խել, յափշտակութեան և գահասիրութեան ա-
 նարգ ախաիւն ախտացեալ, կ'ուղէ այսօր բոլոր
 աշխարհի վրայ թագաւորելու, և այն իտալական
 երեակայութեան ցնորքը, զորն որ իններորդ դա-
 բուն յղացաւ, այսինքն թէ՛ ինքն է սրբոյն
 Պետրոսի փոխանորդը. ինքն է Վրիստոսի ընդ-
 հանուր եկեղեցւոյ գլուխը և կառավարիչը, ին-
 քըն միայն է և ոչ այլ ոք երկրիս վրայ ահաւո-
 ըին և յաւիտենականին Ատուծոյ լիակատար ե-
 ըեսփոխանը և իրեն միայն յանձնուած է դրախտի
 և դժոխոց բանալիներն, որ և իւր կրիցը և կա-
 մացը համեմատ զխեղճ մահկանացուներն ուր և
 կամի կարող է ուղարկել, զոմն 'ի քաւարան, զայլ
 ոմն 'ի Աիմպոս, զմիւսս ոմն 'ի Տարտարոս և հա-
 ղիւ թէ զայլս ոմանս 'ի սեակիր և 'ի սեահոգի

յիսուսականաց և ՚ի մարապետաց ՚ի գողն Նբ-
րահամու, դեռ զինքն կը տանջէ, և ով որ այսօրի-
նակ անձոռնի այլանդակու թիւններն չընդունիր
և չհաւատար, նա կեր յոսածող է և կերեպիկոս, ճու-
րեալ և նորմեալ և եօթն դժոխաց պարտական. ինչ-
պէս են Հայոց, Յունաց, Արուսաց, Վերմանա-
ցւոց, Մեզղիացւոց, Ամերիկացւոց և Վաղղիա-
ցւոց (մեծագոյն մասամբ) ազգերն, որոնք մարդ-
կային ցեղին առաւել առաքինի և առաւել բա-
րեկիրթ մասերն են :

Արեւի պարոն, իմ կարդացած աշխարհա-
գրութեան և համաշխարհական պատմութե մէջ
բարեբաղդաբար երկու և եթ խոլականներ տե-
սած եմ այսպիսի ցնորքներով բորբոքեալ, ո-
րոնցմէ մէկն թիպէթի լեռներուն կաթնած, մէ-
կան Աէզուվի հրաբուրիս լեռէն քիչ մը հեռի
Հուսիմայ աւերակներուն մէջ բազմած. այս եր-
կու անձինքս ալ թէ և մեզի պէս մահկանացու,
մեզի պէս սխալական, մեզի պէս և թերևս ա-
ւելի մեղաւոր իրենց աթոռներն հին աշխարհի
երկու ծայրերը անկած՝ պապն Հուսիմէն և Վա-
յին* թիպէթէն իրարու հակառակ բարձրաձայն
կը պոռան թէ՛ իրենք միայն են անմահին Նստու-
ծոյ բարձակից և աթոռակիցներն, իրենք միայն
են մարդկային անտէրունչ ազգի տէր, հովիւ,
առաջնորդ, փրկող և գառապարտողներն, և
սոքա թէ և քանի մը կրօնական կարծեօք իրարմէ
տարբեր, այլ վարքով, բարքով և գործքով մի
և նոյն անախառութեան և գահասիրուէ գոր-
ծարանէն յառաջ եկած կերեխն :

* Չինաց և մերձակայ աշխարհներուն պապն է, և կ'իշխէ 300
միլիոն ժողովրդեան, իսկ Հուսիմայ պապն հազիւ թէ 70 միլիոն
ժողովրդեան. ուսկից կ'երևի որ Հուսիմայ պապն թիպէթի պա-
պէն շատ ախար է և վար և անոր երկարողը կրնայ սեպուիլ :

Յիշեալ թղթոյ բովանդակութենէն և ոճէն
 Հայոց ազգին ուղղուած կ'երևի որպէս թէ պա-
 պագաւան եղած ըլլային և ոչ թէ քրիստոնէոյք
 և որդիք մի, սուրբ, կաթուղիկէ և սուաքէլա-
 կան Ալեքեղեցւոյ Հայաստանեայց և կը կարծէ պա-
 պրն որ մէկ մասն միայն յիշեալ ազգին Հառի-
 մայ հաղորդութենէն կտրուած է, զորն որ Մի-
 թարեաններն կը ջանան եղեր անոր հնազանդե-
 ցրնելու, և այլն: Արեւնայի ջեռու ցեալ և Աե-
 նեաիկի գաղջ միսի թարեաններու վկայութեանցը
 նայելով, պէտք էր որ պապն ճշմարտախօս և ան-
 սրխալ ըլլար. սակայն այս և ուրիշ կտորներուս
 մէջ ընդ հակառակն կ'երևնայ, ըստ որում նիւ-
 թական և ծանօթ աշխարհիս վրայ բնակեալ Հա-
 յոց ազգը բոլորովին ՚ի սկզբանէ հետէ լուսա-
 լորչադաւան քրիստոնէոյ եղած է և մինչ'ւ աշ-
 խալհիս վերջն ալ պիտի մնայ. յիշեալ ազգը
 երբէք պապագաւան եղած չէ և երբէք Հառիմայ
 աւելորդ ապաշտութիւններն և մալորութիւններն
 ընդունած չէ: Արդարեւ վեցերորդ և տասնե-
 րորդ դարերէն ՚ի վեր յիշեալ ազգէն քանի մը
 տգէտ, աննշան և փոփոխավիտ անհասներ հեր-
 ձեալ՝ ոմանք հայ-հաւամ եղան, ոմանք կրակա-
 պաշտ, ոմանք մահմէտական, ոմանք թմուրակե-
 ցի եւ ոմանք ալ պապական, սակայն ասանք մաս-
 նաւոր հերձուածներ ըլլալէն զատ երբէք ազգա-
 յին ամբողջութիւն մը ձեւացուցած չեն եւ չեն
 կրնար, այնպէս որ այսօրուան օրս Տաճ'աստա-
 նի, Աւստրիոյ, Ռուսիոյ և Պարսկաստանի պա-
 պական Հայոց դուժարն առ աւսուելի հաշուե-
 լով հազիւ թէ 55—65,000 հոգի կ'ելլեն ընդ այր
 և ընդ կին, եւ չորս միլիօն քրիստոնէոյ Հա-
 յոց համեմատութեամբ հազիւ թէ 1 առ 70 կամ
 80 կը հաշուին: Աւրեմն եթէ իրական ճշմար-

տութիւնն այս է, հասա ինչո՞ւ Հռովմայ անսխալ
եպիսկոպոսն եւ մխիթարեան ամենագէտ կրօ-
նաւորներն չեն ուղղեր իրենց ամօթալի սխալ-
ներն :

Հայազգի պապականներուն մէկ մասը 7 - 8,000
անձինք Աստանդնուպօլիս կը բնակին, որոնք
մեր V. եկեղեցիէն 1828 թուին բոլորովն բաժ-
նուելէն և Հռովմայ մուրուսթեանցը պատրու-
ուելէն ետքը, իրենց փառամուլ և մուլեռանդն
հովուաց գրգռելովը դարձեալ նորանոր հեր-
ձուածներու մէջ ինկաւ, ինչպէս են Հասուն-
եան քաթուիկ, Աեննայի մխիթարեան քաթուիկ,
Աենետիկի քաթուիկ, լիբանանցի քաթուիկ, հա-
լեպցի քաթուիկ, տեղացի քաթուիկ, և այլն, ո-
րոնք թէ և ամենքն ալ պապագաւան՝ սակայն իբ-
րև այլակրօններ կատաղութեամբ իրարու դէմ
կը կռուին, զիրար կը չարախօսեն, զիրար կը
հալածեն, և ամօթալի հայհոյութեամբք կրօնի
և այսօրուան օրս Հռովմայ պապն չկրնալով ա-
նոնց ոչ վէճի նիւթն հասկընալ և ոչ երկպա-
ռակութեան պատճառներն վերցընել՝ կը հրա-
մայէ յիշեալ թղթովն որ հաշտուին և լուռ կե-
նան. գերբնական իմաստութիւն ('), Աթերա-
կան անսխալութիւն ('') պապական դատողու-
թիւն ('') = թող պապն իւր անսխալութեամբն
այսպէս կարծէ թէ խաղաղութիւն արար և թող
Աիէննայի քառաստուածեան Ալրոպան իւր ա-
սուշ ցնորքներու մէջ թաւալի համարելով թէ
վէճն լինցաւ, իսկ մենք մեր սխալականութիւնը
կը համարիմք և կը պնդեմք թէ վէճն նորէն ըս-
կըսաւ և առաջինէն աւելի պիտի զայրանայ և
բորբոքի, ըստորում Հռովմայ քարոզած պապա-
կանութիւնն ալ ուրիշ բան չէ, բայց եթէ ա-
տելութիւն, կագ, երկպառակութիւն և հեր-

ձուլած և ուր որ ալ մտեր և արմատ ձգեր է ,
 ինչպէս է Իտալիա , Սպանիա , Ահապատան , ա-
 սոնցմէ աւելի ցանկալի պարգևներ յառաջ բե-
 րած չէ , վասն զի Չի* Խաղաղութիւն միտարկաց գը-
 րեալ է :

Ալ այսպէս մեր՝ թէ և պապական , բայց ան-
 կեղծ կարեկցութեան արժանի ազգայիններուն
 ցաւալի վիճակն թող ամէն լուսաւորչակրօն քր-
 իստոնեաներուն անմոռանալի դաս ըլլայ և ու-
 չի ուշով միտ դնեն թէ եօթն տարիէ ՚ի վեր
 ինչ վրդովմունք , ինչ դայթակղութիւններ չի
 կրնեց այս փոքրիկ հասարակութիւնը պապա-
 կրօնութեան պատճառաւ : այս վերջին եօթն տա-
 րուան մէջ Հռովմայ ճամբան հոգնեցաւ իրարու
 դէմ դանդաւաններ , ամբաստանութիւններ և բռ-
 ղոքներ ուղարկելէն , աստուածաբան եպիսկո-
 պոսներն և կրօնաւորներն բօսիլիէօն եղան , կար-
 տինալներն բաւականէն աւելի արծաթ և սակի
 աստիէն անդ իէն կողոպտեցին և Հռովմայ կոն-
 դակներն և վճիռներն Աստանդնուպօլսի փո-
 ղոցներն սիֆարայի թուղթէն աւելի շատցան : սա-
 կայն երկպառակութիւնն հանդարտելու տեղը՝
 օր ըստ օրէ դայրանալու վրայ է : Արեմն միտքեր
 նիդ բերէք , ո՞վ լուսաւորչակրօն քրիստոնեա-
 ներ , Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ “ Ամե-
 նայն Ժառ ” ի պողոց ի-րմէ ճանաչի” խօսքն և Հռովմայ
 քարոզած և պաշտած կրօնի երպիսութիւնն այս
 սակաւաթիւ համազգայիններուս մինչև ցայսօր
 կրած և այսուհետև կրելիք կրօնական ընտանե-
 կան և բարոյական վրդովմունքներովը քննեցէք
 և ճանաչեցէք , և յայնժամ անշուշտ եմ որ դուք
 ալ ինձի պէս ներքին համոզմամբ պիտի վկայէք թէ՛
 կրօն մը , որ հաւատացելոց ընտանեկան խաղա-
 ղութիւնն այսպէս կը վրդովէ , կրօն մը , որ եղ-


բայր եղբօր դէմ, դստերը մարց դէմ, և որդիք
հարց դէմ այսպէս կը զինէ, կրօն մը, որ միշտ
և հանապազ խռովութեան և երկարառակութե
ծնուցիչ և դաստիարակ եղած է, կրօն մը, որ
որդւոց և դստերաց զհարս և զնախահարս, ըզ
հաւս և զնախահաւս անիծել կը սորվեցնէ և ա
նօնցմէ խորշիկ և զատուիկ կը պատուիրէ, վեր
ջապէս կրօն մը, որ փոխանակ մարդուս սարս
կանեալ բնութիւնը աւետարանի սրբարար և
փրկարար սկզբունքներովը ազնուացրնելու և սրբ
բացրնելու, կը խանգարէ, կը վատթարացուցա
նէ և սոսկալի մտութիւններու մէջ կը խրէ, ինչ
պէս է ծայրէ 'ի ծայր Բոսալիոյ, Վալանիոյ և այլ
պապական ժողովրդոցը, այսպիսի կրօնն, կ'ըսեմ,
թէ և կրնայ պատրական և Հռովմէական ըլլալ և
հազարումէկ անգոյ՝ տիտղոսներով ճոխանալ, այլ
նչ երբէք քրիստոնէական, ոչ բնաւ Վատուա
ծային և երկնային, որոյ գոյութիւնն է Վատուա
սիրութիւն և եղբայրսիրութիւն, նախատակն՝ մար
դոյս բարոյական ընտանեկան և մտաւորական կա
տարելութիւնն, և պտուղներն են՝ խաղաղու
թիւն, խնդութիւն, անյիշաչարութիւն, անու
խակալութիւն, աննախանձութիւն և վերջապէս
երկրաւոր և երկնաւոր երջանկութիւն հաւա
տացելոց, յորոց յոյժ կարի յոյժ զուրկ է ախ
տակիր ժողովարանն Հռովմայ:

Յիշատակեալ կոնդակին մէջ պապին վկայու
թեանը նայելով, Վենետիկի հայազգի այլակրօն
մանողոններն նոր դաւանութիւն կամ առաւել
ճիշտ խօսելով նոր չարախօսութիւն մ'ալ ստեղ
ծեր են իրենց բաղմերախտ և անյիշաչար ազգայ
նոց դէմ նորանոր հայհոյութիւններով լեցուն,
որպէս թէ մինչև ցայսօր եղածներն բաւական
չէին, թէ և բերանով ալ նոյն մենաստանը գա
է 2

ցող կամ իրենց հետ տեսնուող ամէն ազգա-
 յիններուն կը խոստովանին թէ ահամոյ այս
 փոքրոգութիւնն գործեր են եւ միայն զՀասունն
 յողթահարելու և զանոխակալ պապն իրենց կող-
 մին վատորկելու համար: Սակայն, սիրելի պարոն,
 թէ և Հայաստանեայց Եկեղեցւոյ քարոզած
 և պաշտած կրօնիցը համեմատ երեսպաշտութիւնն
 և երկերեսութիւնն յանցանք սեպուած են, բայց
 ոչ ըստ Հռովմէականին, որուն մէջ գերագոյն
 ճշմարտութենէն վեր նոր էակն մ'ալ կը պաշ-
 տուի արևելեան ազգերուն դեռ անձանօթ, որ
 է անամօթ խաբեբայութիւն: Ըստ որում ամէն
 անձանց իրենց ըղձիցը և նպատակին հասնելուն
 համար ամէն միջոց ներելի է և սուրբ: Միսի-
 թարեաններուն Հայաստանեայց սուրբ եկեղե-
 ցւոյ դէմ ըրած չարախօսութիւններն և հայհո-
 յութիւններն նոր չեն և մինակ հայերէն լեզու-
 ոյ գրուած չեն, այլ 150 տարու ընէ 'ի վեր ի-
 տալերէն, գաղղիարէն և այլ լեզուներով այժ-
 մեան ըրածէն աւելի չարագոյններն տպել և հը-
 րատարակեր են և եթէ ասոնց վրայ կը տարա-
 կուսիք դուք կամ ուրիշ ազգայիններս՝ գրեցէք
 որ քանի մը այսպիսի հայհոյական տոմարներէն
 ձեզի ուղարկեմ, ուստի ամօթ և մեծ ամօթ է
 մեր ազգայնոցն, եթէ այնպիսի ուրացօղոց վհա-
 յութեանն կամ ջատագովութեանն կարօտելու
 ըլլամք մեր եկեղեցւոյ սրբութիւնն, ճշմարտու-
 թիւնն ու հազար անգամ Հռովմայ ապականեալ
 ժողովարանէն ուղղափառ ըլլալուն համար կամ
 թէ անոնց հայհոյութենէն մազիմը չափ երկիւղ
 ունենանք, ըստ որում ճիշդ ըլլալէն ետքը ա-
 մէն վատութիւն ներելի է:

Բոլոր աշխարհ գիտնալէն ետքը, տարակոյս
 չունիմ որ Սենեալիկի ու Սեննայի ամենագէտ

կրօնաւորներն ալ գոնէ քիչ մը գիտցած ըլլան
 որ Հռովմայ եպիսկոպոսն և եկեղեցին այս վեր-
 ջին 300 տարուանս մէջ 60 միլիօն բուն պատրա-
 դաւան, այսինքն՝ Վաղղիացի, Վերմանացի, Ան-
 գղիացի, Ամերիկացի, Ռուսացի և այլ ժողովուրդ-
 ներ կորսնցընելէն ետքը, այսօրուան օրս աւա-
 զի վրայ շինուած տունէն աւելի խախուտ է և
 Քաթեժոնի աշտարակէն աւելի քայքայեալ, և թէ
 պէտ գեռ Աւրոպիոյ քանի մը կողմերը քաթոլիկ
 անուանով ժողովուրդներ և պաշտամունքներ կան,
 այլ բոլորովին հակառակ պապին սկզբանցը և
 վարդապետութեանցը, որովհետև պապն Հռով-
 մէն կը պռուայ թէ՛ ես անսխալ եմ, իսկ Վաղ-
 ղիոյ եկեղեցին 30 միլիօն ժողովուրդով մէկ տեղ
 միւս կողմէն կը պնդէ և կ'ապացուցանէ թէ՛
 պապն միշտ սխալսկան է, է և եղիցի, պապն Հռ-
 ուովմէն կը պռուայ թէ՛ ես տիեզերական ժողո-
 վէն վեր եմ, իսկ Սորբոնի Ատուածաբաններն
 կը պնդեն և կ'ապացուցանեն որ պապերն միշտ
 ժողովոց հնազանդ և հպատակ են եղեր և պի-
 տի ըլլան յաւիտեանս յաւիտենից, և այլ այս-
 պիտի անթիւ հակառակութիւններ, թէ և եր-
 կու կողմն ալ ուղղափառ կը սեպուին և այսպի-
 տի այլանդակութիւններէ զղուելով օր ըստ օրէ
 կ'աշխատին Աւրոպիոյ բարեկիրթ ժողովուրդնե-
 րն իրենց պարանոցը պապին տմարդի և երկա-
 թի լուծէն և իրենց կրօնքը և խիղճը անոր սը-
 նապաշտութենէն և ոչուփուճ սահմանադրու-
 թիւններէն ազատելու և հանգչեցընելու, իսկ
 անոնց հակառակ՝ երբոր Աենեաիկի միսիթար-
 եաններն գիտեն թէ Հայաստանեայց եկեղեցին
 և ազգը ՚ի սկզբանէ հետէ միշտ ինքնիշխան եղած
 է և երբէք ոչ Հռովմէն, ոչ Աստանդնուպօլի-
 գէն և ոչ այլ որ և իցէ պատրիարքէ կ'սխալմ



ունեցած չէ և չիպիտի ալ ունենայ երբէք, երբ
 որ գիտեն կ'ըսեմ, այս իմաստուններն թէ Հայ
 յոց ազգը և եկեղեցին Հռովմէն և Հռովմէա-
 կանութեան երեսէն աւելի չարիքներ, թշուա-
 ռութիւններ, աղէտներ, կորուստներ և կոր-
 ծանուսներ կրած է և կը կրէ տակաւին, քան
 որչափ Պարսիկներէն, Արաբացիներէն, Թաթար-
 ներէն և նոյն իսկ աշխարհաւեր և արեանարբու
 Անկիթամուրէն, երբոր գիտեն, կ'ըսեմ, թէ
 Հայոց ազգը հարիւր հազար ազգայինէն աւելի
 Անկիթութեան պատճառաւ կորսնցուց, ետ-
 թանասուն հազար գերդաստանէն կամ անձէն
 աւելի ազգայիններ յիսուսականներու անօրէն
 և անաստուած բռնութիւններովը և հարածանք-
 ներովը Ահաստան, Ալիցիա, և Հունգարիա
 կորսնցուց, 30000 գերդաստանէն աւելի Ալիկիոյ
 Հայոց թագաւորուն վերանալէն Իտալիա գաղ-
 թական երթալով և պապադաւան ըլլալովին
 կորսնցուց, թող Աղմիրի երեք հարիւր հայազ-
 գի Տահկեցի ընտանիքներն, Աստանդուպօլսի
 բոլորովին լատինացեալ Տերացի ըսուածներն և
 Հալէպի, Վիբանանու, Թրեսաի, Վենետիոյ,
 Հռովմի, Վիվորնոյի և այլևայլ գաւառաց և
 քաղաքաց Հայազգի բիւրաւոր ընտանիքներն,
 որոնք այսօրուան օրս հոգւով և մարմնով կոր-
 սուած համարելի են մեր եկեղեցւոյ և ազգի նը-
 կատմամբ, երբոր գիտեն, կ'ըսեմ, յիշեալ եթե-
 րական իմաստասէրներն թէ Հռովմ ասկէ աղէկ
 և աւելի հատուցում չէ ըրեր և յաւիտեան
 չի պիտի ընէ ոչ Հայուն, ոչ Հռովմին, և ոչ
 ալ որ և իցէ ազգուրաց և հաւատուրաց ան-
 ձանց, որոնք իրենց բուն հոգւոր և մարմնաւոր
 ճնոգքնին կ'ուրանան և թշուառաբար պապին
 խորթ հայրութիւնն կը գրկեն, հասցա ինչու

այսքան տակաւին յամառեր և պապին անդամ
ներուն պլոււսած կեցեր են և չեն ուղեր իրենց
կամաւոր գերութեան լուծը և շղթաները ան-
գամ մը առ յաւիտեան թօթափել և անկէց
հրաժարիլ, ինչպէս որ Հայոց սուրբ եկեղեցին
ամէն առտու սատանայէն կը հրաժարի. մանա-
ւանդ երբ որ կը տեսնան թէ բուն Մտալացիներ
ըն անգամ պապին անդրան կագոյն զաւակներն
յաջող վայրկեանի միայն կ'ըստասեն պապու-
թիւնն մշտնջենաւորապէս աշխարհիս երեսէն
բնաջինջ ընելու. ինչո՞ւ անգամ մը գոնէ միտ-
քերնին չեն բերեր թէ իրենց գոյութիւնն և
ապրուստն ոչ թէ պապին, այլ Հայոց ազգի վե-
հանձն առատաձեռնութենէն կախուած է և է,
և եթէ այսօրուան օրս Հայոց ազգը աղնիւ վը-
րէժինդրութեամբ մը արգիլէ որ Միսիթարեան
գիրքերն ո՛չ ազգային դպրոցներն մտցընեն և ոչ
ձեռք առնուն, այն ժամանակը Ա. Վ. յազարու մի-
աբաններն չէ՛ թէ չորեքօրեայ մահուամբ, այլ
յաւիտենական մահուամբ կը մեռանին :

Մինչեւ ցայս վայր ըրած խորհրդածութիւն-
ներէս երկու հետեւանք յառաջ կու գան, այ-
սինքն, 1. կ'ամ Ա ենետիկի միսիթարեաններն Վի-
եննացւոց պէս հոգւով եւ մարմնով պապակա-
նացեալ իրենց ազգային զգացմունքն եւ համա-
կրութիւնն կորսնցուցեր են և մեղի հետ Մտա-
լացի միսիօնարներու նման խաբեբայութեամբ
և կեղծաւորութեամբ կը վարուին. 2. կ'ամ թէ
առ հարկի և ժամանակաւորապէս պապադաւան
ըլլալով իրենց հայրենեաց և ազգի լուսաւոր-
չեան ուղղափառ սուրբ եկեղեցւոյ միտումը և
սէրը տակաւին անշէջ և ծածուկ կը պահեն,
ինչպէս շատ անգամ ալ երևելի ազգայնոց առ-
ջին վկայեր են : Արդարեւ մեծ երկմտութենէ և

մտայուղութենէ զվեղ ազատած կ'ըլլային, եթէ
յանձն առնուին ներկայ երկու կարծիքներէն
մէկն կամ մէկալն իրենց Վարձակչային միջոցաւ
ճանուցանելու 'ի գիտութիւն արժէն ազգիս ։

